ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԾՄԱԿԱՀՈՂ, ՎԱՆՔ, ՆՈՐ ՂԱԶԱՆՉԻ, ՄՈԽՐԱԹԱՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԽԵՐԽԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

N 4-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2022թ. օգոստոսի 30-ի N 967-Ն §Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող համայնքի ղեկավարի և Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի՝ Վանք, Նոր Ղազանչի, Մոխրաթաղ համայնքների, Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Խերխան համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ նշանակելու մասին¦ և 2022թ. օգոստոսի 30-ի N 968-Ա §Ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին¦ որոշումները՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Ի գիտություն ընդունել, որ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող համայնքում նշանակվել է համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն և Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի՝ Վանք, Նոր Ղազանչի, Մոխրաթաղ համայնքներում և Մարտունու շրջանի Խերխան համայնքում նշանակվել են համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ:
2. Հաստատել՝ Արցախի Հանրապետության վերոնշյալ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների 2022 թվականի հոկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Արցախի Հանրապետության Մարտակերտի և Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողովներին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը՝ ընտրությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

4. Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Կ.Միրզոյանին՝ կազմակերպել սույն որոշումը համապատասխան շահագրգիռ գերատեսչություններին և պատասխանատու կատարողներին ուղարկելու աշխատանքները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 1
ք.Ստեփանակերտ